


Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական
միջազգային կենտրոնի տնօրեն

 Ա. Սարգսյան



Հաշվետվություն

2016թ. Արտաքին կապերի բաժնի

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը միջազգային համագործակցության համաձայնագրեր և հուշագրեր ունի մի շարք միջազգային հաստատությունների և կառույցների հետ՝ Պարմայի համալսարան (Իտալիա), Թուլուզի համալսարան (Ֆրանսիա), Տուշայի համալսարան (Իտալիա), Տուրիզմի և սերվիսի պետական համալսարան (ՌԴ) և այլն:

Տվյալ պահին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժինը համակարգում է հետևյալ ծրագրերը՝

- «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ», որի հիմնական նպատակն է «Գործարար վարչարարություն» մագիստրոսական կրթական ծրագրի կազմակերպումը հեռավար ձևաչափով՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի համատեղ դիպլոմների շնորհմամբ: Միջազգային գործընկերն է Դրեգոնի տեխնոլոգիական համալսարանը: Հաշվետու տարում ավարտվել է բունի տեխնիկական վերազինումը, հեռավար ուսուցմանը համահունչ և հեռավար կրթության իրականացումը կարգավորող կարգերի մշակումը և Գործարար վարչարարություն մասնագիտությամբ մագիստրոսական ծրագրի հեռավար ուսուցման ուսումնական պլանի կազմումը:
- «Վերիտաս՝ Զալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթության երրորդ մակարդակի կառուցվածքային զարգացում» ծրագիր, որի նպատակն է բարելավել Հայաստանի հետբուհական կրթական համակարգը՝ այն համապատասխանեցնելով եվրոպական որակավորումների շրջանակին և Զալցբուրգյան սկզբունքներին: Ծրագրում ներգրավված են շուրջ 20 հայկական և եվրոպական առաջատար բուհեր և կրթական կազմակերպություններ: Հաշվետու տարում ստացվել է ծրագրով նախատեսված համակարգչային սարքավորումները, իրականացվել է Մոլեկուլային և բջջային կենսաբանություն մասնագիտությամբ

